# Դաս 8. Զինանշաններ և դրոշներ՝ ժամանակակից և պատմական

- *Հայկական դրոշների մասին հետաքրքիր փաստեր են պահպանվել հայ պատմիչների մոտ: Առաջինը Պատմահայր Մովսես Խորենացին է, որ խոսում է հայոց հնագույն պետական դրոշի մասին: Նա այն անվանում է «Նշանքն Արտաշիսի»: Խոսքը հայոց թագավոր Արտաշես Ա-ի մասին է: Գրաբարում «նշան» բառն ունի նաև «դրոշ» իմաստը: Հայ Արշակունյաց թագավորության հիմնադիր Վաղարշակն էլ է ունեցել իր արքայական նշանը՝ դրոշը: Ինչպես հիշատակում է Խորենացին՝ այն իր վրա կրել է արծվի պատկեր: Ընդհանրապես, Հին Արևելքում արծիվը խորհրդանշել է ուժ և պետականություն:*
- *Հայոց Տիգրան Մեծ թագավորը նույնպես իր արքայական դրոշն է ունեցել: Չնայած պատմական ուղղակի հիշատակումներ այդ մասին չկան, բայց պատմաբանները կարծում են, որ նրա թագի վրա պատկերված ճառագայթող արևը՝ երկու կողմում՝ արծիվներ, եղել է հենց նրա արքայական դրոշի խորհրդանիշը:*



*Արշակունիների դինաստիայի դրոշը*



*Բագրատունյաց դինաստիայի դրոշը*



*Կիլիկիայի Հայկական թագավորության դրոշը*